Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# Հասմիկի նամակը



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏՀՐԱՏ
1931
ԵՐԵՎԱՆ

Նկարները
Մ. ԱՆՈՒՇԱՎԱՆԻ

891.99-Մ
2-30

2011-07



1.

—Ե՛յ, գիժ փիսիկ,
մի՛ խանգարի.
հանգիստ նստի
իմ կողքին.
չե՞ս տեսնում, որ
գրիչ առել
գիր եմ գրում
տատիկին:
Յեվ Համբիկը
գրեց, գրեց,
ցրեց ամբողջ
մի յերես,
մի՛ն էլ նայեց,
ապա ծալեց
ու ծրարի
մեջ դրեց:
—Ես էլ հասցեն
Լենինական,
փողոց համար
քսան ու վեց,
մի փողոց է
լայն ու մեծ,
ես էլ նրա
տան համարը՝
ճիշտ քսան.
ես էլ տատիս
ազգ-անունը՝
ես՝ Ֆահրադյան,
ես՝ Յեղսան:




2.

Յեվ Համբիկը,
լավ աղջիկը,
յելավ՝ նամակն
ուղարկի,
գցեց փոստի
արկղը պատի,
գնաց դպրոց
մարզանքի:
Ու քիչ հետո
արագ—արագ
յեկավ կառքը
միաձի,
որ արկղի
նամակները
տանի փոստը
ու հանձնի:
Փոստում տատի
գիրը դրին
պայուսակում
ահագին,
կառքով տարան
մինչ կայարան,
տվին մեկնող
գնացքին:

3.

—Ու ու, ու ու.
ինձ ճանպա տու,
ուժգին գոչեց
մեքենան,
և գնացքը
առաջ անցավ,
անիվները
թափ առան:

10 JUN 2013

10422



Եսպես անցավ
շոգեկառքը
կոլխոզներով
լայնարձակ,
ու բամբակի
լայն դաշտերով,
բոստաններով
ընդարձակ,
գնաց, անցավ
Ուլուխանլու,
Էջմիածին
կայարան,
Սարդարապատ,
բամբակը շատ,
վոր ունի մեծ
գործարան,
հետո Արաքս
ու Ալագյոզ
և Անին,
վոր ենքան շատ
պեմզա ունի
Թանգագին։

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна



Յեվ յերբ Աղին
կայարանից
շոգեկառքը
փնչալով
գնաց դեպի
Լենինական
ուրախ յերգեր
յերգելով,
նրան հեռվից
բարև տվեց
Լենտեքստիլը
սուլոցով։
Լենինական
կայարանում
պայուսակը
հանեցին,



կրկին անգամ
կառքով տարան
ելի փոստին
հանձնեցին։

4.

Մյուս օրը
փոստատարը
կողքին կապած
պայուսակ,
ման էր գալիս
փողոց-փողոց,
հանձնում լրագիր
ու նամակ։

Յեվ յերբ վոր նա
գնաց, հասավ
Քսանուվեցի
փողոցին,
«Յեղսան բաջի
Ցահրադյանի
տունը են ե»,
ասացին։
—Նամակն ումնից,
ընկեր ցրիչ,—
գոչեց նանը
շփոթված։

—Դա Դանիելյան
Համբիկիցն ե,
Յերևանից,—
նա ասաց։
—Վա՛յ, ազիզ ջան,
գոչեց տատը
և նամակը
ստացած
ձեռքին բռնած
ուրախ-ուրախ
գնաց սենյակ
ու կարդաց.





«Իմ լավ տատի,
անուշ տատի,
կարոտ եմ քեզ
անհաման,
ինչ կլինի
գիրս կարդաս՝
վեր կենաս, գաս
Յերևան։
Իմ լավ տատի,
քաղցրիկ տատի,
պիոներ եմ
հիմի յես,
դպրոց գնում,
մարզանք անում,
գիր եմ գրում
մեծի պես։
Ես տատի էլ
գիտես, տատի,
քանի՜ անգամ
դպրոցում
աշխատանքներ
պայման կապել
ու տարել եմ
սոցմրցում»...
Կարդալուց հետ
մի անգամ էլ
պաչեց գիրը
[illegible]
իսկույն նստեց
գրիչ առավ
պատասխանը
ուղարկի։

ՀՀ Ազգային գրադարան
NL0402162

ԳԻՆԸ 40 Կ.

10422

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



891.995
Z-30

А. АЙРАПЕТЯН
ПИСЬМО АСМИК
ГИЗ ССРА 1931 ЭРИВАНЬ

Պետհրատ № 1779 Հրամանագ. № 6698 (բ) Վիմ. Պետհրատի Պատվ. № 4203 Տիրաժ 4000